Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 02574465-ԱՊ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

07/12/2020թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովադիր)՝ ի դեմս **գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի** մի կողմից, և **«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս **գործադիր տնօրեն Արման Դաղունցի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 16/01/2020թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 02574465-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) առողջապահության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 4292-Ա հրամանի համաձայն փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվում են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.1. Պայմանագրի N 3 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
   1.2. Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված՝
   1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «**58,280,000,000** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**57,400,000,000 ՀՀ դրամ**» բառերով,
   1.2.2 Պայմանագրի 6.2 կետում «**171,224,241** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**170,849,615 ՀՀ դրամ**» բառերով:
2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 30/11/2020թ. ժամը 00:01-ից և գործում է Պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում:
3. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2020թ.-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
4. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, 0010, Հյուսիսային պողոտա 10 տ. 1
Հեռ.՝ + 374 10 56 04 04
Էլ. փոստ՝ info@armeniainsurance.am
Բանկ՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ

Բանկային հաշիվ՝ 2470101744870040
ՀՎՀՀ՝ 02574465

Գործադիր տնօրեն՝
Արման Դաղունց

HARUTYUNYAN TIGRAN 1514770059

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3
Հեռ: +374 60 80-80-03
Էլ. փոստ՝ info@moh.am
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Բանկային հաշիվ՝ 900011105013
ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան

KOCHARYAN LUSINE 6509770407

Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Дата: 2020.12.21 14:50:44 +04'00'

Հավելված N 1
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրում
փոփոխություններ կատարելու վերաբերյալ
07/12/2020թ. կնքված համաձայնագրի

«Հավելված N 3
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(ՀՀ դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները											
		մինչև 2020թ. փետրվարի 29-ը	մինչև 2020թ. մարտի 31-ը	մինչև 2020թ. ապրիլի 30-ը	մինչև 2020թ. մայիսի 31-ը	մինչև 2020թ. հունիս 30-ը	մինչև 2020թ. հուլիս 31-ը	մինչև 2020թ. օգոստոսի 31-ը	մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը	մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը	մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը	մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը տարի
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ	19,072,600	28,608,900	42,910,500	57,212,200	71,513,800	85,815,400	99,886,500	114,155,200	133,178,200	152,201,200	170,849,615	**170,849,615**

Ապահովագրող

HARUTYUNYAN TIGRAN 1514770059

Ապահովադիր

KOCHARYAN LUSINE 6509770407

Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Дата: 2021.02.21 14:51:39 +04'00'